24 Կուզե՞ս ազատ ըլլալ մեղքի բեռեն,

1. Կուզե՞ս ազատ ըլլալ մեղքի բեռեն,
Մեծ զորություն կա սուրբ արյան մեջ,
Կուզե՞ս հաղթող ըլլալ չարին ամեն,
Մեծ զորություն կա արյան մեջ:

Զորություն կա մեծ և հրաշալի
Գառնուկին արեան մեջ,
Զորություն կա մեծ և հրաշալի
Գառնուկին անգի՛ն արյան մեջ:

2. Կուզե՞ս ազատ ըլլալ չար կիրքերեն,
Մեծ զորություն կա սուրբ արեան մեջ,
Եկ, լվացվե Գողգոթա աղբյուրեն,
Մեծ զորություն կա արյան մեջ:

3. Կուզե՞ս ըլլալ քան զձյուն սպիտակ,
Մեծ զորություն կա սուրբ արյան մեջ,
Մեղքիդ բիծերն անհետին արյան տակ,
Մեծ զորություն կա արյան մեջ:

4. Կուզե՞ս Տիրոջդ՝ Հիսուսին ծառայել,
Մեծ զորություն կա սուրբ արյան մեջ,
Միշտ Իր անվան օրհնություն ալ երգել,
Մեծ զորություն կա արյան մեջ: